ԻՆՉՊԻՍԻ ՍԵՐՄ ՑԱՆԵՍ, ԱՅՆ ԷԼ ԿՍՏԱՆԱՍ

1+1



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԵՐԹ 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թ. թիվ10 (10)

ԼԻՆԵԼ ԱՐԺԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻ

Սույն թվականի դեկտեմբերի 12-ին Գեղարքունիքի միջնակարգ դպրոց այցելեց Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը: Նա բաց դաս վարեց դպրոցում գործող «Աժդահակ» էկոակումբի և «1+1» թերթի լրագրողական խմբակում ընդգրկված աշակերտների հետ: Բաց դասի ընթացքում մարզպետ Գնել Սանոսյանը զրույց ունեցավ աշակերտների հետ, խոսեց արդի աշխարհի բնապահպանական կարևոր հիմնախնդիրների և մարտահրավերների վերաբերյալ: Նա իր գոհունակությունը հայտնեց, որ դպրոցում գործում է բնապահպանական խմբակ, որը միտված է հասարակությանը բնապահպանական դաստիարակություն տալուն:

Գնել Սանոսյանը հանդիպեց նաև Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում գործող «1+1» թերթի խմբագրակազմում ընդգրկված պատանի լրագրողներին:

Ծավալվեց հետաքրքիր զրույց, որի ընթացքում մարզպետը պատասխանեց պատանի լրագրողների բազմաբնույթ հարցերին՝ անդրադառնալով մարզի կրթական, մարզամշակութային, բնապահպանական և այլ ոլորտներին վերաբերող հարցերին:

Նա իր ներածական խոսքում կարևորեց թերթի գործունեությունը, ոգևորեց աշակերտներին՝ նշելով, որ լավ միջավայր է ստեղծվել նրանց համար, ովքեր կարող են ազատ ստեղծագործել, իրենց մտքերն ու գաղափարներն հանձնել թղթին:

-Ինչքան էլ որ ինտերնետային դարաշրջանը զարգանա և լինի մեր առօրյայի մասը, միևնույն է, թերթը, ստեղծագործական աշխատանքը միշտ մնայուն է: Ստեղծագործելով, մի փոքր հոդված գրելով, մեկից հարցազրույց վերցնելով, խմբագրելով՝ շատ մեծ գործ եք անում, որպեսզի այս ոլորտը պահպանվի եւ զարգանա: Իսկ ամենակարևորն այն է, որ երեխաների մոտ կարող են ծնվել բազմաթիվ գաղափարներ հանդիպումների, քննարկումների, հարցազրույցների, ստեղծագործելու ընթացքում, որոնք կարող են պետք գալ համայնքին, մարզին,-նշեց Գնել Սանոսյանը:

Աշակերտների կողմից հնչած առաջին հարցը վերաբերվում էր մարզում կրթության առաջընթացին:

Պատասխանելով կրթական ոլորտին վերաբերող հարցերին՝ մարզպետը նշեց, որ կրթության ոլորտում կան լրջագույն խնդիրներ, որոնք բաժանվում են 3 տեսակի՝ շենքային, կադրային եւ ծրագրային:

-Մենք մարզում ունենք մի քանի տասնյակ դպրոցական շենքեր, որոնք արդիականացման խիստ կարիք ունեն: Դրանց հիմնանորոգման համար միջոցներ տրամադրելն անհիմաստ է, քանի որ այդ շենքերը սեյսմակայունության ապահովման խնդիր ունեն: Ամրացման դեպքում դրանք ավելի շատ միջոցներ են պահանջում, քան նոր դպրոցական շենք կառուցելու դեպքում է: Դրա համար մեզ ոչ միայն համապատասխան միջոցներ են անհրաժեշտ, այլ նաեւ որոշակի ժամանակ: Երկրորդ լուրջ խնդիրն այն է, որ մենք կադրային խնդիրներ ունենք հատկապես սահմանամերձ եւ հեռավոր գյուղերում, որտեղ առարկաները կամ բաց են մնում, կամ մեկ մասնագետը 2-3 առարկա է դասավանդում, և հասկանալի է, որ դա չի կարող ամբողջական կրթություն տալ երեխային: 3-րդ խնդիրը կրթության ոլորտում այն է, որ ոչ բոլոր դասագրքերն են համապատասխանում կրթական չափորոշիչներին: Որոշ առարկաներ կամայականորեն հանվել են դպրոցից՝ ինչ-ինչ պատճառաբանությամբ: Մարզում ունենք մի բնակավայրից մի այլ բնակավայր երթևեկող մոտ 400 մանկավարժներ, ովքեր 2020 թվականի հունվարից պետական միջոցներից ստանալու են փոխհատուցում երթեւեկության համար,- հավաստեց Գնել Սանոսյանը:

Շենքային վատ պայմաններ ունեցող դպրոցների թվում մարզպետը նշեց Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի շենքը, որը կառուցման օրից չի վերանորոգվել ու ունի կապիտալ նորոգման խնդիր: Գ. Սանոսյանը խոստացավ, որ շուտով կնորացվեն դպրոցի պատուհանները:

Աշակերտների այն հարցին, թե դպրոցում դասավանդվող, որ առարկաներն է կարևորում, Սանոսյանը նշեց, որ, իր կարծիքով, կրթության գլխավոր հիմքը «Հայոց լեզու» և «Հայոց պատմություն» առարկաներն են: Եթե հայ մարդը չգիտի իր լեզուն և պատմությունը, չի կարող ունենալ բարձր կրթական մակարդակ, չի կարող հայագիտության մասին անհրաժեշտ պատկերացում ունենալ: Նա անհասկանալի է համարում եւ այն, որ որոշ մարդիկ փորձում են տիրապետել օտար լեզուների՝ առանց մայրենիի անհրաժեշտ իմացության:

Հարցերին հնչեցին հայրենասիրության թեմայով: Գ. Սանոսյանը հայրենասիրությունը կարևորեց մարդու գործունեությամբ:

-Բոլորն էլ կարող են խոսել հայրենասիրությունից , այնպես խոսել, որ կողքի մարդիկ հուզվեն : Հայրենասիրությունը պետք է դրսեւորվի սեփական անձով և անձի գործունեությամբ: Եթե դու մի տեղ ապրում ես, և քո վարքականոնը և աշխատանքը օգուտ են տալիս հայրենիքին, մարզին, համայնքին, ուրեմն դու քո հայրենիքը սիրում ես, իսկ եթե վնաս ես տալիս քո միջավայրին, արժեքներ չես ստեղծում, ապա ավելորդ է հայրենասիրությունից խոսելը,- շեշտեց Գնել Սանոսյանը :

Մարզպետը ներկայացրեց իր կյանքի կարգախոսը՝ չխաբել, քանի որ իր համար սուտ խոսելը բացառապես անընդունելի փաստ է:

Իսկ թե ինչո՞վ է զբաղվում ազատ ժամանակ՝ ընթերցանությամբ, թե արվեստի որևէ ճյուղով, նա ասաց, որ եթե ժամանակ է ունենում, երկու բան է անում՝ լինել ընկերների միջավայրում, ֆուտբոլ խաղալ, իսկ մյուսը՝ կարդալ: Մարզպետը նշեց, որ մարզպետի աշխատանքն այնպիսին է, որ բոլոր ոլորտների հերտ առնչվում է, ուստի հարկավոր է կարդալ օրենքներ, իմանալ ավելին ու միշտ աշխատել:

Թե ինչն է համարում կյանքում հաջողության գրավական՝ նա նշեց, որ իր պատկերացմամբ մարդը երկու բան պիտի ունենա՝ ընտանիք, որտեղ երջանիկ կլինի, երկրորդը՝ հպարտանալ իր կատարած աշխատանքով: Հայրենիքի նկատմամբ ունենալ սեր և չդավաճանել սեփական գաղափարներին և սկզբունքորեն առաջ գնալ:

Եվ վերջում, անդրադարձ կատարելով «1+1» թերթին, մարզպետ Գնել Սանոսյանը նշեց, որ մեր թերթն ունի առավելություններ, և գլխավոր առավելությունն աշակերտների տարիքն է, այն լավ գաղափարները, որոնք ծնվում են նրանց մոտ: Նա հաջողություն մաղթեց թերթի աշխատանքներին և հորդորեց պատանի լրագրողներին՝ միշտ նայել առաջ:

« 1+1» թերթի խմբագրություն

ՄԵՐ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՈՒՍՈՒՑԻՉԸ
/Նվեր Աբրահամյան/

Այցեքարտ- Ծնվել եմ 1951 թվականին, Մարտունու շրջանի Զոլաքար գյուղում, ուսուցչի ընտանիքում: 1968 թվականին ավարտել եմ Զոլաքարի միջնակարգ դպրոցը՝ ոսկե մեդալով: Նույն թվականին ընդունվել եմ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, որն ավարտել եմ 1973 թվականին և աշխատանքի անցել Զոլաքարի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ: 1978-1983 թվականներին աշխատել եմ հեռակա դպրոցի տնօրեն, որը կից էր Լիճքի հեռակա միջնակարգ դպրոցին: Հեռակա դպրոցի նպատակն էր՝ կրթել թերի կրթություն ունեցողներին՝ անկախ տարիքից: 1985-1993 թթ. աշխատել եմ N 1 դպրոցում՝ որպես տնօրեն: Իմ աշակերտներից շատերը բազմաթիվ մրցանակներ են շահել «Ֆիզիկա» առարկայի մրցույթներից: Երկու աշակերտներ եղել են Հայաստանի առաջին մրցանակակիրներ: Եղել եմ նաև վերապատրաստող դասախոս: Երկար տարիներ աշխատել եմ մեթոդմիավորման նախագահ: Այժմ դպրոցի կառավարման խորհրդի նախագահն եմ:

Հարց-Արդյո՞ք ձեզ ուղղորդել են մասնագիտության ընտրության հարցում:

Պատասխան- Ո՜չ, հայրս և եղբայրս եղել են «Հայոց պատմություն» առարկայի ուսուցիչ: Իսկ ֆիզիկան իմ ուղղությունն է եղել, և ես եմ ընտրել այդ մասնագիտությունը:

Մարիամ

Հ.-Ինչպե՞ս եք գնահատում ուսուցչի աշխատանքը:

Պ.-Դա շնորհակալ աշխատանք է: Ինձ համար միևնույն է՝ տնօրեն, թե ուսուցիչ, կարևորը երեխաներին կրթելն ու դաստիարակելն է:

Հ.-Ի՞նչ խնդիրներ ունի դպրոցն այսօր:

Պ.-Այսօրվա խնդիրներից հիմնականն այն է, որ բարձր որակավորում ունեցող ուսուցիչների պակաս կա դպրոցներում:

Հ.-Դուք ասացիք, որ եղել եք վերապատրաստող ուսուցիչ, կարևորո՞ւմ եք այդ աշխատանքը:

Պ.-Եթե վերապատրաստումները ծառայում են բուն նպատակին, ուրեմն լավ է:

Հ.-Ճի՞շտ եք համարում այն, որ ուսուցիչն անընդհատ պետք է ինքնակրթությամբ զբաղվի:

Պ.-Եթե ուսուցիչը ինքնակրթությամբ չզբաղվի թեկուզ մեկ շաբաթ, նա այլևս ուսուցիչ չէ:

Հ.-Ինչպիսի՞ն պետք է լինի ծնողը, որպեսզի իր երեխային կարողանա դաստիարակել որպես իսկական մարդ:

Պ.-Ընտանիքում վատ ծնող գոյություն չունի: Յուրաքանչյուր ծնող ինքն է նպատակահարմար գտնում, թե ինչպես դաստիարակի երեխային:

Հ.-Ո՞րն է գյուղի և քաղաքի երեխաների առօրյայի տարբերությունը:

Պ.- Այս հարցը միշտ եղել է: Ես հուսով եմ , որ նոր իշխանությունները կկարողանան ապակենտրոնացնել մայրաքաղաքի դերը, և բոլոր մարզերը կսկսեն զարգանալ հավասարաչափ: Մեր մարզի երեխաներն ունեն մեծ ունակություններ բնական գիտությունների ոլորտում:

Հ.- Ի՞նչ է ձեզ համար հայրենասիրությունը:

Պ.-Հայրենասիրությունն ինձ համար հմուտ մասնագետ լինելն է ընտրած բնագավառում, հարգալից վերաբերմունքը շրջապատի մարդկանց և բնության նկատմամբ: Ամեն մեկը պետք է կառուցի և պաշտպանի իր տունը, իր գյուղը, իր քաղաքը և իր պետությունը:

Հ.-Ի՞նչն եք գնահատում մարդու մեջ:

Պ- Ազնվությունն ու բարությունը:

Հ.-Ի՞նչ գրքեր եք կարդացել:

Պ.-Մանկությունից մինչև երիտասարդություն կարդացել եմ արկածային գրքեր, որոնք կապ ունեն գիտության հետ: Մի որոշ ժամանակ անց սկսեցի կարդալ պատմական գրքեր, իսկ այժմ՝ և՜ արվեստ, և՜ գիտական գրականություն:

Հ.-Ի՞նչն եք կարևորում ընտանիքում:

Պ-Ընտանիքում կարևոր են փոխադարձ հարգանքը, նաև չպարտադրելը, այսինքն՝ կամք չթելադրելը:

Հ.- Դուք հանդուրժո՞ղ եք:

Պ-Այո՜:

Հ.-Դուք ձեզ համարո՞ւմ եք առաջնորդ և իշխանավոր:

Պ-Ես ո՜չ առաջնորդ եմ և ո՜չ էլ իշխանավոր:

Հ.-Ձեր խորհուրդը մեր ապագա սերնդին:

Պ.- Կուզենայի, որ սրընթաց զարգացող աշխարհում մենք՝ հայերս, ունենայինք մեր կայուն տեղը թե՜ գիտական, թե՜ ռազմական ոլորտում: Եվ, իմ խորագույն կարծիքով, մարդու գաղափարը և երևակայությունը զարգացնում են գրքերը: Կարդալ, կարդալ և էլի կարդալ:

Արփինե

Շնորհակալություն ենք հայտնում պարոն Աբրահամյանին՝ հարցազրույցի համար:

ՈՐՎ ԵՆՔ ՄԵՆՔ
/Մեր պատմությունը՝ Ալաշկերտից/

Առաքելյանների տոհմը գաղթել է Արևմտյան Հայաստանի Բագրևանդ գավառի Ալաշկերտ գյուղից: Առաքել պապը ծնվել է 1801 թվականին: Ունեցել է 2 որդի՝ Պողոսը և Պողսիկը: Պողոսը ունեցել է 4 որդի՝ Մելքոնը, Խաչատուրը, Գասպարը, Կարապետը: Մելքոնը ունեցել է 1 որդի՝ Երվանդը: Երվանդը ունեցել է 2 որդի՝ Լիպարիտը և Արամայիսը /Վոլոդյան/: Լիպարիտը ունեցել է 1 որդի: Արամայիսը ունեցել է 2 որդի՝ Արամայիսը և Ահարոնը:

Խաչատուրը ունեցել է 2 որդի՝ Ռուբենը և Բեյբութը: Ռուբենն ունեցել է 2 որդի՝ Ռազմիկը և Աղվանը, ով մահացել է վաղ հասակում: Ռազմիկը ունեցել է 1 որդի՝ Աղվանը: Աղվանը ունեցել է 1 որդի՝ Ռազմիկը:

Բեյբութը ունեցել է 2 որդի՝ Կառլենը և Ավետիքը: Կառլենը ունեցել է 2 որդի՝ Արամայիսը /Գնուն/ և Մայիսը: Արամայիսը ունի 1 որդի՝ Ավետը: Մայիսը 1 որդի՝ Կառլենը /Կարեն/:

Գասպարն ունեցել է 2 որդի՝ Ադիբեկը և Խաչատուրը: Խաչատուրը զոհվել է պատերազմի ժամանակ: Ադիբեկն ունեցել է 6 որդի՝ Գրիշան, Հայկը, Սուրենը, Մեխակը, Սերյոժան, Խորենը: Գրիշան ունեցել է 2 որդի՝ Վարդգեսը և Վաչագանը /Համլետը/: Վարդգեսն ունեցել է 3 որդի՝ Արմանը, Ռոմանը և Արտակը: Ռոմանն ունեցել է 1 որդի՝ Կարենը: Արմանն ունեցել է 2 որդի՝ Վարդգեսը և Արթուրը: Արտակն ունեցել է 1 որդի՝ Վահեն:

Վաչագանը /Համլետը/ ունեցել է 3 որդի՝ Էդիկը, Հրանտը, Դերենիկը: Էդիկը ունցել է 2 որդի՝ Գրիշան և Համլետը: Հրանտը հետնորդ չունի: Դերենիկը ունեցել է 1 որդի՝ Համլետը:

Հայկը ունեցել է 4 որդի՝ Վազգենը, Վաչագանը, Գագիկը, Միշան: Վազգենը ունեցել է 3 որդի՝ Սամվելը, Հայկը, Աշոտը: Վաչագանն ունեցել է 2 որդի՝ Վոլոդյան և Խաչիկը: Վոլոդյան ունեցել է 3 որդի՝ Արսենը, Արմանը և Հայկը:Խաչիկն ունեցել է 2 որդի՝ Վաչիկը և Արմանը:

Գագիկն ունեցել է 1 որդի՝ Գարիկը: Գարիկն ունեցել է 1 որդի՝ Գագիկը: Միշան ունեցել է 3 որդի՝ Արտյոմը, Արտակը և Վահագնը: Արտյոմն ունեցել է 2 որդի՝ Միքայելը և Նարեկը: Սուրենն ունեցել է 5 որդի՝ Մակբեթը, Մաքսիմը, Միշան, Սաշիկը, Շալիկոն : Մակբեթն ունեցել է 1 որդի՝ Արթուրը: Արթուրն ունեցել է 1 որդի՝ Մակբեթը: Մաքսիմն ունեցել է 1 որդի՝ Էդգարը:

Միշան ունեցել է 1 որդի՝ Արմանը: Արմանն ունեցել է 1 որդի՝ Միշան: Սաշիկը / Սաշա/ ունեցել է 2 որդի՝ Արմենը և Վրեժը: Շալիկոն ունեցել է 1 որդի՝ Դավիթը:

Սերյոժան ունեցել է 2 որդի՝ Լևիկը և Վլադիկը / Վաչագանը, Վլոն/: Լևիկը ունի 1 որդի՝ Ֆրունզը: Վլադն ունի 1 որդի՝ Սերգեյը: Սերգեյն ունի 2 որդի՝ Վլադը և Լեռնիկը:

Խորենն ունեցել է 2 որդի՝ Ֆելիքսը և Արթուրը / Սայաթը/: Ֆելիքսն ունեցել է 2 որդի՝ Տիգրանը / Խորենը/ և Վաղինակը: Տիգրանը / Խորենը/ ունի 2 որդի՝ Նարեկը և Ֆելիքսը: Վաղինակը ՝ 1 որդի՝ Արան: Մեխակն ունեցել է 3 որդի՝ Աշոտը, Ռուբիկը, Ռաֆիկը, ով այժմ Գեղարքունիքի մարզպետարանում աշխատում է որպես ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ: Աշոտն ունեցել է 2 որդի՝ Արմենը և Արայիկը, ով աշխատում է որպես ՀՀ նախագահին կից ռազմական տեսչության բաժնի վարիչ. կոչումով՝ գնդապետ է. նա ունեցել է 1 որդի՝ Աշոտը: Ռուբիկն ունեցել է 2 որդի՝ Գնելը և Վարդանը: Վարդանն ունեցել է 1 որդի՝ Ռուբենը: Ռաֆիկն ունեցել է 2 որդի՝ Կարենը և Արթուրը: Արթուրն ունեցել է 2 որդի՝ Ռաֆայելը և Նարեկը:

Կարապետն ունեցել է 2 որդի՝ Նուշեվանը և Գառնիկը: Գառնիկն ունեցել է 3 որդի՝ Էդիկը / Ժորան/, Խաչիկը, Ռաֆիկը: Էդիկը / Ժորան/ ունեցել է 2 որդի՝ Տիգրանը և Արմանը: Ժորան և իր եղբայրները շատ հարցերում աջակցում են համայնքային խնդիրների լուծմանը: Տիգրանն ունեցել է 1 որդի՝ Դավիթը: Արմանն ունեցել է 2 որդի՝ Էդիկը, Ղուկասը: Խաչիկն ունեցել է 2 որդի՝ Ֆրունզը և Գնելը: Ֆրունզն ունեցել է 2 որդի՝ Խաչիկը և Դավիթը: Գնելն ունեցել է 1 որդի՝ Սարգիսը: Ռաֆիկն ունեցել 1 որդի՝ Արթուրը:

Նյութի հեղինակ՝
Քրիստինե Առաքելյան

ԻՄ ՊԱՐՏՔՆ ԵՄ ԿԱՏԱՐՈՒՄ

2019 թվականի դեկտեմբերի 19-ին Հայոց բանակ զորակոչվեցին մեր դպրոցի շրջանավարտներ Արման Ասատրյանը, Ավետիք Ավետիսյանը և Սամվել Ավետիսյանը: Նրանց մաղթում ենք խաղաղ և անփորձանք ծառայություն:

«1+1» թերթի խմբագրակազմը սիրով շնորհավորում է բոլոր զինծառայողների գալիք Ամոնորը և Սուրբ Ծնունդը:

ՎԱԼԵՐԻ ԻԳԻԹԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ես այն սերնդի ներկայացուցիչներից եմ, ովքեր մանկությունից ականատես են եղել մեծ տերության քայքայմանը և մեր անկախ հայրենիքի կազմավորմանը: Մենք սիրում ենք քննադատել մեր առաջնորդներին, բայց ինձ թվում է, որ այդ ճանապարհը տանում է դեպի փակուղի: Կառուցողական քննադատությունը շատ օգտակար է, բայց որպեսզի մենք լինենք կառուցողական, պետք է լինենք կարդացած ու զարգացած մարդ:

Ընտանեկան պայմաններից ելնելով՝ ես մի քանի տարի մեկնել եմ արտագնա աշխատանքի ՌԴ /խոպան/: Աշխատանքս, իհարկե, հեշտ չէր: Շփվում էինք տեղացի մարդկանց հետ, խոսում էինք տարբեր բաներից՝ ընտանիքի, պետության, մարդկային հարաբերությունների մասին: Ես խորին համոզմամբ կարող եմ ասել, որ ռուս ազգը մեծիմասամբ բարի ու մեծահոգի ժողովուրդ է, բայց իմպերիալիստական և շովինիստական հայացքները նրանք այդպես էլ չկարողացան վերանայել: Երբ 2008 թվականին եղավ ռուս-վրացական պատերազմը, ես համոզվեցի, որ մենք պետք է զարգացնենք մեր երկիրը, մենք պետք է աշխատենք մեր հողի վրա: Եվ 2010 թվականին Գավառում հիմնադրեցի ավիատոմսերի վաճառքի կենտրոն և քայլ առ քայլ զարգացրի իմ գործը: Այսօր իմ կազմակերպությունը զբաղվում է նաև ուղևորաբեռնափոխադրումներով ՌԴ-ի տարբեր քաղաքներ:

Հարգելի՜ համագյուղացիներ, դաստիարակե՛ք հայրենասեր երեխաներ, օրինակ վերցրեք զարգացած մարդկանցից ու երկրներից, առաջ տարեք ձեր ընտանեկան և պետական շահը, հարգեք միմյանց, վե՛ր դասեք ազգայինը և շատ աշխատե՛ք մեր հողի վրա՝ մեր հայրենիքում:

Գավառի Ս. Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի՝ Հեղինե Հովհաննիսյան

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԱՄԱՆՈՐ

Ես և մայրս գնացել էինք ամանորյա գնումների: Ամեն ինչ այնքա՛ն գեղեցիկ էր, այնքա՛ն ուրախ ու տպավորիչ: Կատարեցինք մեր գնումները և վերադարձանք տուն: Վառ տպավորություններով շարունակ խոսում ու ցույց էի տալիս գնումները: Ինձ մեծ ուշադրությամբ լսում էր տատիկս ու նույնպես հիանում գնված զարդարանքներով: Այս ամենի հետ մեկտեղ գլխումս մի միտք էր պտտվում, թե ինչպե՞ս է նշվել Ամանորը նախկինում, ի՞նչն է մարդկանց ուրախացրել: Ու սկսեցի հարցեր տալ տատիկիս:

-Տա՜տ, ինչպե՞ս եք նշել Նոր տարին:

-Չկար մեր ժամանակ էն, ինչը որ կա հիմա,-պատասխանեց տատս: Մեր ժամանակ սեղանին դրվում էր կճեպով ընկույզ, պնդուկ, շագանակ, ավանդական գաթա, կանեփով տոլմա, մսով խաշլամա:

-Իսկ տունը զարդարու՞մ էիք:

-Հիմնականում չէ, բայց տոնածառն էինք զարդարում բամբակով, ժապավեններով, տարբեր մրգերով՝ մանդարին, խնձոր, տանձ, նաև կոնֆետ էինք կախում ծառից:

-Իսկ նվերներ կայի՞ն, երեխաներին ի՞նչ էինք նվիրում:

-Իհարկե, կային, բայց նվերները հասարակ էին՝ տոպրակի մեջ լցնում էինք պնդուկ, չամիչ, շագանակ, ընկույզ, մանդարին, էն, ինչը որ կար սեղանին:

-Երեխաները ուրախանո՞ւմ էին իրենց նվերներով:

-Ուրախանում էին: Զարթնում էին, և յուրաքանչյուր երեխա իր բարձի տակից հանում էր իր նվերը ու սկսում մեկը մյուսի հետ համեմատել: Բայց ես միշտ հավասար էի լցնում, որ չկռվեն իրար հետ:

-Տ՜ատ, բայց որ այդքան վատ պայմաններ էին, ինչպե՞ս էր Նոր տարին ուրախ անցնում:

-Պայմանները շատ վատ էին, բայց մարդիկ էին ուրախ, մարդիկ չէին ընկնում ձևականությունների հետևից, ուրախ էին տոնում՝ անկախ պայմաններից: Երեխաներն իրենց ստացած նվերներով գնում էին արդեն սառցակալ գետի ափ ու ճան էին խաղում: Խաղի իմաստը այն էր, որ խաղում հաղթողը վերցնում էր պարտվողի ընկույզն ու պնդուկը:

Տատիս հետ զրույցից ես հասկացա, որ մարդկային շփումը, ջերմությունը, ուրախությունը սեղանի ու զարդարանքի մեջ չէ, այլ՝ մարդու, չնայած որ դրանք էլ կարևոր են, ու առանց դրանց ևս չի լինի:

Քրիստինե Սարգսյան

ԱՐՏԻՍՏԸ

Ո՞վ է նա, ո՞վ է այդ արտիստը:

Հայաստանի չքավոր գյուղերից մեկում ապրում էր տասնյոթամյա մի պատանի՝ անունը Բենի: Հոգով, սրտով, ոտքից գլուխ արտիստ: Արվեստն էր խոսում նրա բերանով. երբ ժպտում էր, արվեստն էր ժպտում: Նրա հագուկապն էր նույնիսկ արվեստագետի: Միշտ հագնում էր գծավոր վերնաշապիկ ու կրում մի յուրահատուկ իր: Ինչ խոսք, տարբերվում էր հասակակիցներից թե՜ մտածելակերպով, թե՜ ոճով և առհասարակ՝ ամեն ինչով: Նկարիչ էր, նաև ջութակ էր նվագում: Մեկ նկարելիս կտեսնեիր նրան, մեկ՝ նվագելիս: Մեկը մյուսին լրացնում էր: Եվ ամենակարևորը, ամեն երեկո գրադարանից գրադարան էր վազում, առավոտներն էլ լուսացնում էր արվեստանոցում: Իրենց տան նկուղն էր Բենիի անտեսված արվեստանոցը:

Շատ էին ճնշում նրան: Բոլորի ծաղրի առարկան էր դարձել: Ծաղրում էին իր ոճը, տարօրինակ էին կոչում, մինչդեռ յուրահատուկ էր, պարզապես իր շրջապատի մարդիկ՝ այդ ծաղրողներն էին միօրինակ: Մի օր, երբ նա գլուխ դրեց իրեն ծաղրող հիմարների հետ, կյանքի մեծագույն սխալը թույլ տվեց: Դարձավ նրանց վրեժի առարկան: Երկու հիմար ու հիշաչար տղա այդ երեկո մտան նրա արվեստանոց, վառեցին կտավները, տասնմեկ տարվա կտավները, ա՜յո, վեց տարեկանից նկարում էր: Կոտրեցին ջութակն ու կախեցին պատին , այրեցին գրքերն ու փոշին քամուն տվեցին: Վառեցին, այրեցին... կոտրեցին սիրտը: Բենին, ամենը տեսնելով, ընկավ ծանր հոգեկան ապրումների մեջ, և նրան շուտով տեղափոխեցին հոգեբուժարան:

Ինչ արեց այդ անմիտ հասարակությունը, կոտրեց արտիստի ստեղծագործական միտքը, հոգեկան ցնցման ենթարկեց, որը դարձավ հոգեկան խանգարման պատճառ: Արդյունքում ի՞նչ շահեցին. իրենք մնացին նույն անտաղանդ ու հիմար մարդիկ, քանի որ գիտակից մարդը նման քայլի չէր գնա...

Արտիստը մնում է արտիստ, կապ չունի հոգեբուժարանում, թե արվեստանոցում: Եվ մինչև խորը ծերություն Բենին նկարում էր հոգեբուժարանի պատերի վրա,.այն թանգարան էր դարձրել՝ իսկական արվեստի գլուխգործոցներ ստեղծելով:

Լուսինե Առաքելյան

ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԸ ՉԵՐՋԱՆՑԵՑԻՆ ՄԵՋ ԵՎՍ

Աղետ հասկացությունը մարդկության մեջ առաջացնում է սարսափ: Գիտության զարգացման հետ փոխվել է ընկալումը տեղի ունեցող երևույթների նկատմամբ: Հնում մարդկությանը բնական սարսափելի աղետները մատուցել են որպես աստվածների պատերազմ, սև ուժերը կառավարել են մարդուն՝ օգտագործելով տեղի ունեցած աղետալի երևույթները: Մենք լավ գիտենք, որ ոմանց մեջ այն կարծիքը կա, թե Սպիտակի երկրաշարժը ուներ արհեստական ծագում և ուղղված էր Խորհրդային Միությունում հայ ժողովրդի ըմբոստացման դեմ:

Հարգելի՜ համագյուղացիներ, իմ խոր համոզմամբ, կարդալով ու լսելով Խորհրդային Միության հաջողությունների և անհաջողությունների մասին, փորձ է արվում մեծ տերությունների կողմից մեզ դարձնել կառավարելի՝ ստեղծելով վախի մթնոլորտ:

Այսօր արդեն մենք հասկանում ենք, որ եթե այդ մեծ տերությունը՝ Խորհրդային Միությունը, չկարողացավ գոյատևել մինչև 20-րդ դարի վերջը, դժվար թե կարողանար այդքան գիտական պոտենցիալ ներդնել, որ ստեղծեր այդպիսի աղետներ: Իհարկե, այդ դեպքում նա օգտագործեց իր վերջին շունչը՝ շամանական գաղափարախոսությամբ:

Աշխարհում տեղի ունեցած բնական աղետներից են՝
Հավայան հրաբուխ-ԱՄՆ, 1916թ.,
Սպիտակի երկրաշարժ-ՀՀ, 1988թ.դեկտեմբերի 7,
Ֆլորիդայի ջրհեղեղ-ԱՄՆ, 2005թ.,
Մեթյու փոթորիկ-ԱՄՆ, 2016թ. սեպտեմբերի 28
Ճապոնիայի ջրհեղեղ- 2018 թ. հուլիս 3:

Մեր խորին ցավակցությունն ենք հայտնում բնական աղետների զոհ դարձած մարդկանց հարազատներին:

Քրիստինե Սարգսյան

«ԱՐՄԱԹ» ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գեղարքունիք գյուղի «Արմաթ» ինժեներական լաբորատորիան հիմնադրվել է 2018 թվականի հունվարի 28-ին, «Վորլդ Վիժն Հայաստանի» և «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության» կողմից:

«Արմաթ» ինժեներական լաբորատորիաներում կրթությունն անվճար է: Ընդունելության տարիքային նվազագույն շեմը 10 տարեկանն է: Այստեղ աշակերտներն ուսումնասիրում են ծրագրավորում, խաղերի և անիմացիաների ստեղծում, ռոբոտաշինություն, եռաչափ մոդելավորում և տպագրություն, համակարգչային փայտամշակում և լազերային փորագրություն: Սկզբնական շրջանում ուսանողներն ուսումնասիրում են Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի կողմից ստեղծված և հայ մասնագետների կողմից հայաֆիկացված «Աղուէս և Կրիայ» ծրագրավորման և խաղերի ու անիմացիաների ստեղծման միջավայրերը, ձեռք են բերում ալգորիթմային մտածողություն, որից հետո սկսում են խորացնել գիտելիքները եռաչափ մոդելավորման և տպագրության, լազերային փորագրության և ռոբոտաշինության ասպարեզներում: Աշակերտները ուսումնասիրում են ծրագրավորման բազմաթիվ լեզուներ, ինչպես նաև ավտոմատացնում տարբեր համակարգեր, ստեղծում են ռոբոտ-օգնականներ և իրականացնում սեփական տեխնոլոգիական նախագծերը:

Գեղարքունիք գյուղի «Արմաթ» ինժեներական լաբորատորիայում սովորել է շուրջ 35 աշակերտ, այս պահին հաճախում է 15 աշակերտ: Նրանք ուսումնասիրում են «Աղուէս և Կրիայ» ծրագրավորման միջավայրերը, 3D մոդելավորում, աշխատանք եռաչափ տպիչի և շաղափային հաստոցների հետ, Arduino տպասալի հետ աշխատանքներ, ինչպես նաև Սերոբ -3 համակարգով ռոբոտի կառուցում, HTML, CSS-ով պատրաստվել է web կայք՝ Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված:

2018 թվականին խմբակի սաներից մասնակցել են #armathTechno Camp 2018-ին և իրենց ջոկատների կազմում զբաղեցրել 1-ին հորիզոնականը: Ինչպես նաև 2018 թվականին մասնակցել են Ռոբոտների Հայաստանյան 11-րդ առաջնությանը և գրավել 4-րդ հորիզոնականը:

2019 թվականին նրանք մասնակցել են նաև մի շարք մրցույթների և ցուցահանդեսների, որոնք են՝ DigitecExpo- 2019, Digital UAV Forum, «ԱՅԲ» դպրոցում, Գեղարքունիքի մարզային ցուցահանդես, Միջազգային Robotex Armenia ռոբոտաշինության մրցույթ: Լաբորատորիայի խմբակավարն է Գեղարքունիք գյուղի բնակիչ, ծրագրավորող, «Luseen Mobile» ՍՊԸ և «Luseen Technologies» SS զարգացման հիմնադրամի տնօրեն Արտակ Դռնոյանը:

ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում անցկացվեց ամանորյա միջոցառում 1-5-րդ դասարաններում և նախակրթարանում: Միջոցառումը հագեցած էր բազմաբնույթ համարներով՝ պար, երգ, բեմականացում, խաղմրցույթ: Մասնակցում էր Գեղարքունիք համայնքի «Գոգո» պարային համույթը: Տոնական զարդարված դահլիճ, ուրախ ու վառ տրամադրություն, հաճելի պատասխանատու աշխատանք. ահա թե ինչ մթնոլորտ էր տիրում դպրոցում: Միջոցառման ավարտն էլ ավելի պայծառ դարձրին Ձմեռ պապն ու Ձյունանուշը: Վերջում երեխաները ստացան տոնական նվերներ, որոնք նախապատրաստել էր Գեղարքունիքի համայնքապետարանը:

Թող մեր փոքրիկների շուրթերից հնչած ամանորյա բարեմաղթանքները դառնան իրականություն՝ բոլորիս բերելով խաղաղություն, առողջություն, սեր և անսպառ ժպիտներ:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ

«1+1» թերթի խմբագրություն

Աննա Գևորգյան

Հարգելի՝ համագյուղացիներ, Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթին տրված ձեր հարցազրույցները մեր դպրոցականների համար ինքնահաստատման դաս են, որով մեր երեխաները ձեր կողմից տրված նյութերը շարադրում են իրենց հայացքների և ընկալումների շրջանակում, ավելի համառոտ ձևով: Մենք ներողություն ենք խնդրում, եթե չենք մանրամասնում այն, ինչի մասին մանրամասն խոսել եք դուք:

Հարգանքով՝ Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթի խմբագրություն:

4

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1
Փոստային դասիչ՝ 1207
Թողարկման օրը՝ 27. 12. 2019 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝
Ռոզա Հակոբյան
Տպաքանակը՝ 500
Հեռախոս՝ 093919658:
էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru